ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

ԴԱՍ 4.4. Աֆրիկայի տնտեսությունը

• • •

Բավական է ասել, որ մինչև վերջերս էլ Աֆրիկան հաճախ անվանում էին գաղութային մայրցամաք: Եվրոպական պետությունների կողմից Աֆրիկայի գաղութացումը կատարվել է հիմնականում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, ընդ որում երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում իրավիճակը շատ քիչ է փոխվել: Սակայն երկրորդ աշխարհամարտից հետո բավականին ինտենսիվ կերպով սկսվեց ապագաղութացման գործընթացը: Այն նշանակալից էր հատկապես 1960թ., երբ գաղութային կախվածությունից ազատվեց 17 երկիր: Պատահական չէր, որ այդ թվականն անվանեցին «Աֆրիկայի տարի»: Հետագայում էլ ապագաղութացումը շարունակվեց և աստիճանաբար փլուզվեցին անգլիական, ֆրանսիական, բելգիական և պորտուգալական գաղութային կայսրություններն Աֆրիկայում:

• • •

Գաղութային համակարգի փլուզումը պայմանավորված էր համաշխարհային տնտեսության արդեն ստեղծված կառուցվածքով, կապերով և հարաբերություններով մետրոպոլիայի վարած տնտեսական քաղաքականությամբ, երբ զարգացող երկրները չեն կարողանում հաղթահարել զարգացած երկրների համար ագրարահումքային կցորդ (հումք, կիսաֆաբրիկատներ, գյուղատնտեսական մթերքներ) լինելու հանգամանքը: Բացի այդ, գաղութային անցյալի պատճառով աֆրիկյան երկրների միջև շատ կային սահմանային չլուծված խնդիրներ, որոնք հաճախ հանգեցնում էին զինված բախումների և տեղական (լոկալ) պատերազմների: «Աֆրիկյան եղջյուր», Անգոլա, Սուդան, Ռուանդա (հութուների ցեղասպանությունը): Հարկ է նշել, որ ազգամիջյան բախումների օջախներ հիմա էլ են բռնկվում, հաճախակի են նաև զինված պետական հեղաշրջումները:

Տնտեսության զարգացմանը էապես խանգարում է նաև մի շարք պե-

տությունների աշխարհագրական դիրքը: Դեպի ծով ելք չունեցող (ներ-ցամաքային) 15 երկիր կա (Մալի, Բոտսվանա, Եթովպիա, Նիգեր և այլն), որոնք իրենց անբարենպաստ աշխարհագրական դիրքի պատճառով սոցիալ-տնտեսական զարգացման առավել ցածր մակարդակ ունեն:

• • •

Կապիտալիստական ուղիով զարգացող երկրներում մանրկուլտուրային ոլորտը ընդլայնվում է, ինչը պայմանավորված է պետական օժանդակությամբ. համայնքային հողերի սեփականաշնորհում, վարկերի տրամադրում և զեղչերի առկայություն, մրցունակ արտադրանքի մթերում (գնում, տեխնիկական օժանդակության և համագործակցության): Շատ պետություններ կարևորում են գյուղատնտեսության մեքենայացումը և քիմիացումը, բնակչությանը լայն սպառման ապրանքներով (հատկապես՝ պարենամթերքով) ապահովումը,աշխատատեղերի ստեղծումը, հետամնաց շրջանների զարգացումը և այլն:

• • •

Օտարերկրյա և խառը (համատեղ ձեռնարկություններ) կապիտալին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 50%-ից ավելին: Մի շարք երկրներում օրենսդրությամբ ամրապնդված, որ համատեղ ձեռնարկությունների բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը պատկանում է պետությանը, որոշ երկրներում՝ արտասահմանյան մոնոպոլիաներին:

• • •

Կակաոյի (հայրենիքը Ամերիկան է, Կենտրոնական և Հարավային) խոշոր արտադրողներն են Գանան և Կոտ դ՛ Իվուարը): Մանիոկ աճեցվում է հիմնականում սավաննաների զոնայում: Համաշխարհային առաջատարը Նիգերիան է:

Յուղատու արմավենի գլխավորապես մշակում են արևադարձային Աֆրիկայում, Փյունիկյան արմավենի՝ Եգիպտոսում, Ալժիրում: Թելատու մշակաբույսերից առավել տարածվածը բամբակենին է՝ Եգիպտոս, Սուդան, Նիգերիա, ՈՒգանդա, հացահատիկային մշակաբույսերից՝ եգիպտացորենը, ցորենը և բրիձը: Հացահատիկի համախառն բերքի կեսից ավելին մատակարարում են ՀԱՀ-ը, Եգիպտոսը, Մարոկկոն, Նիգերիան:

• • •

Ճուղին մեծ վնաս են պատճառում նաև վայրի գիշատիչ կենդանիները, ինչպես նաև ցեցե ճանճը: Այդ ճանճի խայթոցը առաջցնում է «**Նագանա**» հիվանդությունը, որի հետևանքով անասունները սատկում են: Դա է պատճառը, որ մայրցամաքի կենտրոնական շրջաններում խոշոր եղջերավոր անասնապահությունը գրեթե անհնարին է:

• • •

Կենտրոնական և Հարավային Աֆրիկան հարուստ են ալմաստի (ՀԱՀ, ԿԴՀ), ուրանի, քրոմիտների (ՀԱՀ), ոսկու(ՀԱՀ, Զիմբաբվե) պաշարներով: Մեծ են նաև արդյունահանման ծավալները: Մի շարք երկրներ ունեն զարգացած գունավոր (ՀԱՀ, Զամբիա- ձուլում են պղինձ, ալյումին, ցինկ, կապար, անագ) և սև մետաղաձուլություն (ՀԱՀ, Ալժիր, Նիգերիա):

• • •

Ագրարային երկրներում գյուղատնտեսությանը բաժին է ընկնում ՀՆԱ-ի մինչև 75%-ը, ապա ինդուստրիալ-ագրարային երկրներում՝ ինչև 10%-ը: Այս ցուցանիշները տնտեսության տարբեր կառուցվածք ունեցող երկրներում տարբեր են. օգտակար հանածոներով հարուստ երկրներ (հատկապես՝ նավթով) բարենպաստ հողակլիմայական պայմաններ ունեցող երկրներ և այլն: Երկրներ կան, որ գյուղատնտեսության բաժինը 65-80% է, իսկ Կամերունում, Լիբերիայում հասնում է 95-98%-ի:

• • •

2003թ. Աֆրիկայում կար 53 անկախ պետություն (այժմ՝ 55), որոնք Հարավաֆրիկյան Հանրապետությունից (ՀԱՀ) բացի պատկանում են զարգացող երկրների թվին: Սակայն գաղութային համակարգի փլուզումը դեռ բավարար պայման չէր դարավոր հետամնացությունը հաղթահարելու համար:

Չնայած անկախությանը, տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի վերակառուցմանը և ազգային տնտեսությունների ձևավորմանը, աֆրիկյան երկրները լուրջ հաջողությունների չհասան: Քիչ թե շատ հաջողություններ գրանցեցին **հանքարդյունաբերությունը**, **մանրապրանքային** արևադարձային և մերձարևադարձային բուսաբուծությունը: Շատ երկրներում մանր արտադրողները համարվում են գյուղատնտեսական մթերքնե-

րի գլխավոր մատակարարները ինչպես ներքին շուկայի (սպառողական), այնպես էլ `արտահանման գործում:

Արտահանման մեջ մասնագիտացող ագարակային խոշոր տնտեսություններ զարգանում են առաջավոր ագրոտեխնիկական միջոցառումների համակարգի կիրառման շնորհիվ: Շատ երկրներ աշխատանքի միջազգային բաժանման մեջ մասնագիտացել են 1-2 մշակաբույսի աճեցմամբ (մոնոկուլտուրային տնտեսություն): Մանրապրանքային տենտեսությունները մեծ դեր են խաղում արհեստագործական արտադրության մեջ:: Այս ուղիով են զարգանում Մարոկկոն, Եգիպտոսը, Թունիսը, Լիբերիան, Գանան, Գվինեան,Սենեգալը, Նիգերիան, Քենիան և այլ երկրներ: Սակայն ազգային կապիտալի գործունեության հիմնական ոլորտները մնում են առևտուրը, շինարարությունը, տրանսպորտը, ծառայությունները: Այս երկրների տնտեսության մեջ շատ բարձր է նաև օտարերկրյա կապիտալի դերը:

• • •

Կապիտալից բացի մի շարք երկրներում կա նաև որակյալ մասնագետների պակաս, ինչը լրացնում են օտարերկրյա մասնագետների հաշվին:

• • •

Լայն տարածում ունի քոչվոր և կիսաքոչվոր անասնապահությունը: Գյուղատնտեսության հիմնախնդիրներից են նաև ոռոգումը և էներգազինվածությունը: Ոռոգման և էներգետիկ նպատակներով կառուցվել են խոշոր ջրամբարներ. Վոլտա գետի վրա՝ Ակոսոմբա, Զամբեզի գետի վրա՝ Կարիբա, Կաբորա Բասա, Նեղոսի վրա՝ Ասուանի:

• • •

Աֆրիկայում տրանսպորտային ուղիներն ունեն գաղութային կոնֆիգուրացիա (գծագրություն) և հիմնականում ձգվում են օգտակար հանածոների հանքավայրերից և գյուղատնտեսական մթերքների արտադրման (արտահանվողը) շրջաններից դեպի առաքման նավահանգիստները:

• • •

Բուսաբուծության բաժինը համախառն արտադրանքի ծավալում հինգ անգամ գերազանցում անասնապահությանը, որի զարգացման ցածր մա-

կարդակը պայմանավորված է անասունների ցածր մթերատվությամբ: Ճյուղը զարգանում է էքստենսիվ՝ անասունների գլխաքանակի ավելացման հաշվին: Դա է պատճառը, որ հարուստ խոտային բուսականություն ունեցող և անասնապահության հիմնական գոտի համարվող սավանայում կերային բազան արդեն չի բավարարում: